

ԱՐՏԱԳՆԱ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՈՒՆՆԵՐԻ

ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն «—» հուլիսի 2024թ.
Ք. Երևան

«Բրայթ Տուր» ՍՊԸ-ն, որը գործում է 12.02.24
Կանոնադրության հիման վրա, (գրանցման
համարը՝ 26.110.1235764, ՀՎՀՀ՝ 06964432,
իրավաբանական հասցեն՝ Խորենացի փողոց
2/32, Վանաձոր 2001, Վանաձոր, Լոռի, ՀՀ), ի
դեմս տնօրեն Անի Տաճատի Սամսոնյանի

, այսուհետ «Կատարող» և

այսուհետ՝ «Զբոսաշրջիկ», (միասին՝
«Կողմեր»), կնքեցին սույն պայմանագիրը
(այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Կատարողը
պարտավորում է Զբոսաշրջիկի

հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի

1.1.1 կետում նշված ծառայությունները
(այսուհետ՝ Ծառայություններ), իսկ

Զբոսաշրջիկը պարտավորվում է վճարել այդ
Ծառայությունների դիմաց:

1.1.1 Կատարողը պարտավորվում է մատուցել

CONTRAT DE PRESTATION DES
SERVICES DU TOURISME INTERNATIONAL

République d'Arménie

Ville d'Erevan

"-----" juillet 2024

La Société à Responsabilité Limitée "Bright Tour"

(Numéro d'enregistrement: 26.110.1235764, numéro
d'identification fiscale: 06964432, adresse juridique:
RA, région de Lori, ville de Vanadzor, 2/32, rue
Khorenatsi), représentée par la directrice Ani Tachat
Samsonyan (-----

), ci-après désignée «Le Prestataire», d'une part, et --

-----ci-après désignée «Le Touriste», d'autre part,
ensemble désignées «Les parties», ont conclu le
présent contrat (ci-après désignée «Le Contrat») sur
les conditions suivantes:

1. OBJET DU CONTRAT

1.1. Dans le cadre du Contrat, le Prestataire
s'engage à fournir les services indiqués dans
la clause 1.1.1 du Contrat (ci-après
désignées « Les Services »), tandis que Le
Touriste est obligé de payer pour Les
Services.

1.1.1. Le Prestataire s'engage à fournir Les
Services suivants.

a) Accueil et transfert à l'aéroport

հետևյալ ծառայությունները՝

- Ա) Դիմավորում և ճանապարհում օդանավակայանում
- Բ) Հյուրանոցային համարի ամրագրում և գնում
- Գ) Տրանսֆերի ապահովում դեպի տեսարժան վայրեր
- Դ) Զբոսավարի ծառայություններ
- Ե) Տեսարժան վայրերի և թանգարանների մուտքի տոմսեր
- Զ) Գինու տուր և դեգուստացիաներ
- Է) Տեղեկատվական նյութեր:

1.1.2 Տեղաբաշխել (տեղավորել) Զբոսաշրջիկին հետևյալ վայրում՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զարուբյան 10/10 փողոց, «Cascade Hotel» հյուրանոցում, սենյակի տեսակը՝ «Երկտեղանոց կացություն», ծառայությունները ներառում են նախաճաշ, անվճար wi-fi հյուրանոցի ամբողջ տարածքում, ավտոկայանտեղի և անվտանգություն: Հյուրանոցում գրանցումը՝ 10.07.2024-ին, ժամը 14:00-ին, իսկ դուրս գրումը՝ 17.07.2024-ին, ժամը 12:00-ին:

1.1.3 Զբոսաշրջիկին տրամադրել տրանսֆեր, օդանավակայանից դեպի հյուրանոց մեկնելիս և հյուրանոցից դեպի օդանավակայան ժամանելիս:

- b) Réservation d'une chambre d'hôtel
- c) Transfert vers les sites touristiques
- d) Service d'un guide touristique
- e) Billets d'entrée pour les sites touristiques et les musées
- f) Visite de caves et dégustations
- g) Brochures touristiques

1.1.2. Accueil et transfert vers l'hôtel Cascade situé au 10/10 rue Zarubyan, à Erevan, République d'Arménie. Les chambres sont de type "Standard double", avec Des Services comprenant un petit-déjeuner inclus, une connexion Wi-Fi gratuite dans tout l'établissement, un parking et les services de sécurité. L'enregistrement à l'hôtel est prévu pour le 10 juillet 2024 à 14h00, et le départ est prévu pour le 17 juillet 2024 à 12h00.

1.1.3. Fournir des transferts de l'aéroport à l'hôtel et vice versa lors de l'arrivée et du départ de l'hôtel.

1.1.4. Fournir des transferts vers les sites touristiques prévus dans le programme avec

1.1.4 Զբոսաշրջիկին տրամադրել տրանսֆեր դեպի ծրագրով նախատեսված զբոսաշրջային վայրեր ուղևորվելու համար՝ հարմարավետ, օդորակիչով և ջրով և առաջին բժշկական օգնության դեղատուփով ապահովված զբոսաշրջային տրանսպորտով:

1.1.5 Տրամադրել Զբոսաշրջիկին պրոֆեսիոնալ որակավորված զբոսավարի ծառայություններ՝ ֆրանսերեն լեզվով:

1.2 Պայմանագրի 1.1.1 կետում նշված Ծառայությունների մատուցման ժամկետն է 10.07.2024-17.07.2024թ.:

1.3 Պայմանագրի 1.1.1 կետում նշված Ծառայությունները մատուցված են համարվում Ծառայությունների մատուցման վերջին օրը Կողմերի միջև հանձնման-ընդունման ակտ ստորագրման պահից:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1.1 կետում նշված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է ----- ՀՀ դրամ (500 եվրո)՝ ներառյալ բոլոր տեսակի հարկերը և տուրքերը:

2.2 Սույն պայմանագրի 1.1.1 կետով նշված Ծառայությունների արժեքը կարող է փոփոխվել միայն Զբոսաշրջիկի կողմից

un transport confortable, équipé d'air conditionné, d'eau potable et d'une trousse de premiers secours médicaux.

1.1.5. Fournir à l'hôtel Des Services de guide professionnel de qualité en français.

1.2. Les services mentionnés dans la clause 1.1.1 du Contrat seront fournis du 10.07.2024 au 17.07.2024.

1.3. Les services mentionnés dans la clause 1.1.1 du Contrat seront considérés comme ayant été fournis à partir du dernier jour de la période de prestation Des Services stipulée dans l'acte concernant la fourniture et la réception Des Services signé entre les Parties.

2. LE COUT DU CONTRAT ET LE MODE DE CALCUL

2.1. Le prix total Des Services spécifiés dans la clause 1.1.1 du Contrat s'élève à ----- dram arménien ----- euros), comprenant toutes les taxes et frais applicables.

2.2. Le prix Des Services spécifiés dans la clause 1.1.1 du Contrat peut être modifié uniquement en cas d'acquisition de services supplémentaires par le Touriste.

2.3. Le prix déterminé dans le Contrat ne peut être modifié à partir de la date de signature du Contrat par les Parties.

հավելյալ ծառայություններ գնելու դեպքում:

2.3 Պայմանագրում նշված գինը չի կարող փոփոխվել պայմանագրի երկկողմանի ստարոգրման պահից սկսած:

2.4 Զբոսաշրջիկի կողմից Կատարողին պայմանագրային գինը վճարվում է անկանխիկ եղանակով՝ Պայմանագրում նշված Կատարողի բանկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.5 Զբոսաշրջիկը պարտավոր է Ծառայությունների դիմաց վճարել 50% կանխավճար սույն պայմանագրի 1.1.1 կետում նշված ծառայությունների մատուցման ժամկետից մեկնարկից 25 (քսանհինգ) օր առաջ, իսկ մնացած 50%-ը ծառայությունների մատուցման ժամկետի մեկնարկից 5 (հինգ) օր առաջ:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Սույն պայմանագրով Կատարողը պարտավոր է՝

3.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով,

3.1.2 Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով՝ Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետում:

3.1.3 Զբոսաշրջային երթուղու ժամկետի մեկնարկից առաջ Զբոսաշրջիկին

2.4. Le Touriste s'engage à payer le prix contractuel au Prestataire par virement bancaire, en transférant sur le compte bancaire du Prestataire spécifié dans le Contrat.

2.5. Le Prestataire est obligé de payer 50% du prix total Des Services spécifiés dans la clause 1.1.1 du Contrat dans les 25 (vingt-cinq) jours précédant la date de prestation Des Services, tandis que les 50% restants doivent être payés dans les 5 (cinq) jours précédant la date de prestation Des Services.

3. LES DROITS ET LES OBLIGATIONS DES PARTIES

3.1. Dans le cadre de Contrat, le Prestataire s'engage à

3.1.1. Fournir Les Services avec une qualité appropriée.

3.1.2. Fournir Les Services dans son intégralité, selon les délais spécifiés dans la clause 1.3 du Contrat.

3.1.3. Remettre au Touriste, avant le lancement du voyage, tous les documents d'information requis.

3.1.4. Informer le Touriste sur les règles de sécurité.

տրամադրել ճամփորդության համար նախատեսված բոլոր տեղեկատվական նյութերը:

3.1.4 Ծանուցել Ջրոսաշրջիկին անվտանգության կանոնների մասին:

3.1.5 Ձեռնարկել համապատասխան միջոցառումներ տեղակայման վայրում և ծրագրով նախատեսված զբոսաշրջային վայրերում Ջրոսաշրջիկի անվտանգությունը ապահովելու նպատակով:

3.2 Ջրոսաշրջիկը ժամանակավոր բնակության և տարանցման վայրերում իրավունք ունի՝

3.2.1 Ստանալ Պայմանագրով և էքսկուրսիոն ծրագրով նախատեսված համալիր Ծառայությունները:

3.2.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել իր իրավունքները Պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում:

3.2.3 Իր համար հասկանալի լեզվով Կատարողից ստանալ լրիվ և օբյեկտիվ տեղեկատվություն ժամանման երկրի (վայրի)՝ զբոսաշրջության հետ առնչվող օրենքների և բնակվելու կանոնների, տեղաբնակների սովորությունների, հասարակական և կրոնական ծիսակատարությունների, վարքագծի կանոնների, մշակութային,

3.1.5. Organiser des réunions de coordination sur le site de départ et, conformément au programme convenu, garantir la sécurité du Touriste dans les lieux touristiques prévus.

3.2. Dans les lieux de séjour temporaire et de transit, le Touriste a le droit de:

3.2.1. Recevoir Les Services spécifiés dans Le Contrat et le programme de l'excursion.

3.2.2. Se protéger conformément à la législation de la RA dans le cas où Le Contrat n'est pas exécuté ou est exécuté de manière inappropriée.

3.2.3. Recevoir des informations complètes et objectives de la part du Prestataire dans une langue qu'il comprend sur le pays (le lieu) d'arrivée, les lois et règles de résidence liées au tourisme, les coutumes des résidents locaux, les rituels sociaux et religieux, les règles de conduite, les valeurs culturelles, archéologiques, architecturales, historiques et naturelles, ainsi que sur l'assurance selon les termes et conditions Du Contrat.

3.2.4. S'adresser au Prestataire par le régime 24/7, en cas d'urgence ou dans des cas

հնագիտական, ճարտարապետական, պատմական և բնական արժեքների, ապահովագրության պայմանների, սույն պայմանագրի պայմանների մասին:

3.2.4 Դիմել Կատարողին 24/7 ռեժիմով արտակարգ կամ հատուկ դեպքերում:

3.2.5 Օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ օտարերկրացիների համար սահմանված այլ իրավունքներից:

3.3 Զբոսաշրջիկը ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում պարտավոր է՝

3.3.1 Պահպանել պայմանագրով նախատեսված պայմանները և կանոնները:

3.3.2 Հարգել ժամանման երկրի (վայրի) ավանդույթները, սովորույթները, կրոնական հավատալիքները:

3.3.3 Չխախտել հասարակական կարգը, պահպանել հակահրդեհային անվտանգության կանոնները:

3.3.4 Ժամանակավոր կեցության և տարանցիկ վայրերում Զբոսաշրջիկը պատասխանատվություն է կրում գտնվելու վայրի օրենսդրությամբ սահմանված կարգով, այդ թվում՝ իր ապօրինի գործողությունների հետևանքով առաջացած նյութական վնասի փոխհատուցմամբ:

particuliers.

3.2.5. Exercer les autres droits établis par la législation de la République d'Arménie pour les étrangers.

3.3. Dans les lieux de séjour temporaire et de transit, le Touriste est obligé de:

3.3.1. Se conformer aux termes et conditions stipulés dans Le Contrat.

3.3.2. Respecter les traditions, coutumes et croyances religieuses du pays d'arrivée.

3.3.3. Ne violez pas l'ordre public, respectez les règles de sécurité incendie.

3.3.4. Dans les lieux de séjour temporaire et de transit, le Touriste assume la responsabilité selon la procédure établie par la législation du lieu, y compris l'indemnisation des dommages matériels causés par ses actes illégaux.

4. RESPONSABILITE DES PARTIES

4. ԿՈՂՄԵՐԻ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կատարողի կողմից Պայմանագրում նշված բոլոր Ծառայությունները Պայմանագրի 1.3. կետում նշված ժամկետում չմատուցելու դեպքում Կատարողը Զբոսաշրջիկին վճարում է միանվագ տուգանք՝ Պայմանագրի 2.1. կետում նշված գումարի չափով:

4.2 Կատարողը Պայմանագրում նշված ծառայությունները մասնակի չկատարելու դեպքում տուգանվում է չմատուցված ծառայությունների վճարված գումարի չափով:

4.3 Զբոսաշրջիկի կողմից հաստատված ամրագրումը ծառայությունների ժամկետից նվազագույնը.

ա) 20 օր առաջ չեղյալ համարելու դեպքում Կատարողը երեք աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է տվյալ ծառայությունների դիմաց վճարված կանխավճարը:

բ) 15 օր առաջ ընկած ժամակահատվածում չեղյալ համարելու դեպքում Կատարողը երեք աշխատանքային օրվա վերադարձնում է կանխավճարի 70 տոկոսը:

գ) 10 օր առաջ ընկած ժամանակահատվածում չեղարկելու դեպքում Կատարողը երեք աշխատանքային օրվա

4.1. Le Prestataire est tenu de verser une amende d'un montant équivalent à celui spécifié dans la clause 2.1 du Contrat dans le cas où tous Les Services spécifiés dans le Contrat et le programme de l'excursion ne sont pas fournis dans le délai indiqué dans la clause 1.3 du Contrat.

4.2. En cas de non-exécution partielle Des Services spécifiés dans le Contrat, le Prestataire est redevable d'une amende équivalente à la somme Des Services non fournis, conformément aux termes du Contrat.

4.3. L'annulation de l'accord conclu par le Touriste avant l'expiration du délai stipulé pour la fourniture Des Services est soumise aux conditions suivantes :

a) Dans les 20 jours précédant le début du délai spécifié, le Prestataire rembourse 100 % du montant payé pour Les Services non fournis.

b) Dans les 15 jours précédant le début du délai spécifié, le Prestataire rembourse 70 % du montant payé pour Les Services non fournis.

c) Dans les 10 jours précédant le début du délai spécifié, le Prestataire rembourse 50 % du montant payé pour Les Services non fournis.

վերադարձնում է կանխավճարի 50 տոկոսը:
դ) 1-ից 7 օր առաջ ընկած ժամանակահատվածում չեղյալ համարելու դեպքում Կատարողը չի վերադարձնում ծառայությունների արժեքի 100 տոկոսը:

5 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

5.1 Սույն Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է Անհաղթահարելի ուժի ազդեցություն հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո այն հանգամանքից կամ հանգամանքներից, որը/որոնք դուրս են կողմերի վերահսկողությունից, որի/որոնց առաջացումն ու ազդեցությունը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել, ինչն անհնար է դարձնում Պայմանագրի կատարումը Պայմանագրով սահմանված պայմաններին և ժամկետներին համապատասխան:

5.2 Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները,

d) Dans les 1 à 7 jours précédant le début du délai spécifié, le Prestataire ne rembourse pas plus de 100 % de la valeur Des Services.

5. EFFET DE LA FORCE MAJEURE (FORCE MAJEURE)

5.1. Les Parties sont dégagées de toute responsabilité en cas de manquement à l'exécution totale ou partielle de leurs obligations en vertu du Contrat, si cela était dû à un cas de force majeure, survenu après la conclusion du Contrat, en raison de circonstances indépendantes de la volonté des Parties, de la survenance et l'impact dont les Parties ne pouvaient pas prévoir ou empêcher, ce qui rend impossible l'exécution du Contrat conformément aux termes et conditions fixés par Le Contrat.

5.2. De telles situations sont les tremblements de terre, les inondations, les incendies, la guerre, la déclaration de l'état militaire et d'urgence, les troubles politiques, les grèves, les actes adoptés par un organisme public et d'autres circonstances qui rendent impossible le respect des obligations stipulé par Le Contrat. Si l'influence de la force majeure persiste pendant plus de 3 (trois) mois, chacune des parties a le droit de résilier Le Contrat en prévenant l'autre

գործադրուները, պետական մարմնի կողմից ընդունված ակտը և այլ հանգամանքներ, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել պայմանագիրը, այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5.3 Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքերում

պարտավորությունների չկատարման դեպքում տվյալ Կողմն անհապաղ տեղեկացնում է մյուս Կողմին անհաղթահարելի ուժի ազդեցության իրավիճակի բնույթի, ինչպես նաև վերջինիս մեկնարկի և ավարտի վերաբերյալ և անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքերի առաջացման օրվանից հետո տասը (10) օրվա ընթացքում ներկայացնում է այդ անհաղթահարելի ուժի ազդեցության իրավիճակի մասին ծանուցում՝ կցելով համապատասխան փաստաթղթերը՝ հաստատված իրավասու մարմինների կողմից:

6 ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Partie au préalable.

- 5.3. En cas de non-respect des obligations pour cause de force majeure, la Partie concernée informe immédiatement l'autre Partie de la nature de la situation de force majeure, ainsi que de son déclenchement et de sa fin, et dans les dix (10) jours suivant la survenance des circonstances de force majeure, soumettre une notification de la situation de force majeure en joignant les documents pertinents approuvés par les autorités compétentes.

6. PROCEDURE DE RESOLUTION DES LITIGES

- 6.1. Les Parties s'efforceront de résoudre tous

6.1 Կողմերը պետք է ձգտեն լուծել իրար միջև ծագող բոլոր վեճերը բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրավասու դատարանի կողմից:

7 ԵԶՐԱՓՎԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Սույն Պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2 Հյուրանոցային, տրասպորտային և այլ ծառայությունները կարող են մատուցվել այլ կազմակերպությունների և/կամ անձանց կողմից (ծառայությունների մատակարարների), որոնց հետ Կատարողը ունի համագործակցության պայմանագրեր: Համագործակցության պայմանագրով մատուցվող ծառայությունների անպատշաճ կամ ոչ լրիվ կատարման համար պատասխանատվություն են կրում համագործակցության պայմանագրով ծառայություն մատուցող կողմը:

7.3 Սույն Պայմանագիրը կազմված է

les différends survenant entre elles par le biais de négociations et de consultations. En cas d'échec d'un accord, les litiges sont résolus par le tribunal compétent conformément à la législation de la République d'Arménie.

7. DISPOSITIONS FINALES

7.1 Le Contrat entre en vigueur à partir de la date de signature et reste en vigueur jusqu'à l'exécution complète des obligations des Parties.

7.2 Les services d'hôtel, de transport et autres peuvent être fournis par d'autres organisations et/ou personnes (fournisseurs de services) avec lesquels le Prestataire a des contrats de coopération. Dans ce cas, la partie fournissant Les Services dans le cadre des contrats de coopération est responsable de toute exécution inappropriée ou incomplète Des Services qu'elle fournit.

7.3 Le Contrat est constitué de deux exemplaires ayant la même force juridique, en deux langues, arménien et français chacun étant considéré comme un exemplaire unique du Contrat pour chaque Partie. En cas de contradiction entre les langues arménienne et française, la version arménienne prévaudra.

երկու լեզվով՝ հայերեն և ֆրանսերեն,
 հավասարազոր իրավաբանական ուժ
 ունեցող երկու օրինակից՝
 յուրաքանչյուր կողմի համար
 Պայմանագրի մեկական օրինակ:

**8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ
 ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ
 ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**8. LES ADRESSES DES PARTIES, LES TERMES
 BANCAIRES ET LES SIGNATURES.**

<p>«Բրայթ Տուր» ՍՊԸ ՀՎՀՀ՝ 06964432 Իրավաբանական հասցե՝ Խորենացի փողոց 2/33 Վանաձոր 2001, Վանաձոր, Լոռի, ՀՀ Գործունեության հասցե՝ Բաղրամյան 18, Բ. Երևան, ՀՀ Բանկային տվյալներ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ Բանկային հաշիվ՝ 1570080638670100 Անի Սամսոնյան, Տնօրեն</p>	
<p>Ստորագրություն</p>	<p>Ստորագրություն</p>

<p>"Bright Tour" SARL Numéro d'identification fiscale: 06964432 Adresse juridique: RA, région de Lori, ville de Vanadzor, 2/32, rue Khorenatsi Adresse commerciale: RA, Erevan, Baghramyan 18 Données bancaires: "Ameriabank" SA Compte bancaire: 1570080638670100 Ani Samsonyan, Directrice</p>	<p>----- ----- ----- ----- -----</p>
<p>La signature et le sceau</p>	<p>La signature</p>

4S	
----	--

--	--